ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Վիտեբսկի մարզի Գլուբոկսկոյե շրջանի Ուդելովսկի
պատգամավորների գյուղական խորհրդի
(Բելառուսի Հանրապետություն)
և
Լոռու մարզի Հաղպատ համայնքի գյուղապետարանի
(Հայաստանի Հանրապետություն)
միջև

ք. Գլուբոկոյե ____ հուլիսի 2013թ.

Վիտեբսկի մարզի Գլուբոկսկոյե շրջանի Ուդելովսկի պատգամավորների գյուղական խորհուրդը (Բելառուսի Հանրապետություն), ի դեմս Ուդելովսկի պատգամավորների գյուղական խորհրդի նախագահ՝ Կարման Վիկտոր Կազիմիրի, մի կողմից, և Լոռու մարզի Հաղպատ համայնքը (Հայաստանի Հանրապետություն), ի դեմս համայնքի ղեկավար՝ Քառյան Վահրամ Սերյոժայի, մյուս կողմից, այսուհետ՝ «Կողմեր», հիմք ընդունելով հաստատված երկկողմանի բարեկամական հարաբերությունները, ցանկանալով նպաստել փոխշահավետ համագործակցության զարգացմանը մշակութային, սոցիալական և կրթական ոլորտներում, երկու վարչական միավորների բնակիչների միջև համագործակցության և փորձի փոխանակման նպատակով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

1. Բելառուսի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության օրենսդրություններին համապատասխան համագործակցել հավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա: Զարգացնել հարաբերությունները բարեկամական ոգով, փոխադարձ հարգանքի և վստահության սկզբունքներով:
2. Սույն համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը պարտավորվում են.
   2.1. պարբերաբար իրականացնել տեղեկությունների և փորձի փոխանակում ինքնակառավարման մարմինների գործունեության և կողմերի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտներում;
   2.2. նպաստել պայմանագրերի կնքմանը և իրականացմանը, տնտեսական ոլորտում կոնկրետ նախագծերի և ծրագրերի մշակմանը և ֆինանսավորմանը;
   2.3. նպաստել ուսումնական հաստատությունների միջև գործընկերական կապերի հաստատմանը, ուսանողների հետ հանդիպումների անցկացմանը, ուսուցիչների և ուսանողների պատվիրակությունների փոխանակմանը;

2.4. շփումներ ստեղծել մշակութային հաստատությունների, միավորումների և ստեղծագործական խմբերի միջև, նպաստել երկու երկրների ավանդույթների և մշակույթի մասին գիտելիքները խորացմանը;

2.5. համագործակցել բնապահպանության ոլորտում, համակարգել և լիովին նպաստել շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացմանը;

2.6. խթանել համագործակցությունը ձեռներեցության ոլորտում:

3. Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում երկու կողմերի ստորագրման պահից:

4. Համաձայնագիրը կարող է դադարեցվել Կողմերից մեկի գրավոր ծանուցագրով՝ ծանուցումը ստանալուց երեք ամսվա ընթացքում:

5. Համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել, որի մասին կողմերը կնքում են առանձին գրավոր համաձայնություն:

Համաձայնագիրը կազմված է չորս օրինակից՝ հայերեն և ռուսերեն (երկուական օրինակ յուրաքանչյուր լեզվով), որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմը ստանում է երկու լեզուներով մեկական օրինակ:

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզի Հաղպատ Համայնքի կողմից համայնքի ղեկավար՝	Բելառուսի Հանրապետություն Վիտեբսկի մարզի Գլուբոկսկոյե շրջանի Ուդելովսկի պատգամավորների գյուղական խորհրդի կողմից. խորհրդի նախագահ՝
Վ.Ս. ՔԱՌՅԱՆ	Վ.Կ. ԿԱՐՄԱՆ